ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

THE HEAD OF THE GENERAL DEPARTMENT OF LOGISTIC SUPPORT OF MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ МИНСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ Ըստամ/672

«25» 02 2021թ.

«ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի տնօրեն
Է. Փոթոյանին
ք. Երևան, Աբովյան փ./23
էլ. հասցեն՝ mda.trade@yandex.ru
ՀՎՀՀ 02828767

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի միջև 28.08.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/29-4 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 30.09.2020թ. կնքված N1 Փոփոխության (այսուհետ՝ Փոփոխություն) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ. 4-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակը՝ նշված քանակով՝

| Ապրանքի անվանում | Չ/մ | Քանակ | Մատակարարման ժամանակացույց՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020.թ | Չմատակարարված քանակ |
|---|---|---|---|---|
| Մեթիլպրեդնիզոլոն (մեթիլպրեդնիզոլոն նատրիումի սուկցինատ) methylprednisolone (methylprednisolone sodium succinate) | հատ | 800 | 800 | 800 |

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակի մասով ապրանքի չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և Փոփոխությունը:

Տեղեկացնում ենք, որ «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն՝ պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել *62,522 (վաթսուներկու հազար հինգ հարյուր քսաներկու) ՀՀ դրամ*՝ որպես Պայմանագրով նախատեսված տույժ, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 և 900008000664 հաշվեհամարներին ենթակա են գանձման համապատասխանաբար *290,800 (երկու հարյուր իննսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ*, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և *2,908,000 (երկու միլիոն ինը հարյուր ութ հազար) ՀՀ* դրամ որպես տուժանք՝ որակավորման ապահովում:

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ